

ՄԱՏՆԵԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՄԵՆԵԱՑ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎՐԱՑ

(Տեւ Հառ. ԽԱ, էջ 50, 155, 209. ԽԲ, 18):

ԳԼՈՒԽ ԺԳ

Այդուանք Օսաց և Յունաց 'ի վիրա և գերել գնոսին. — Յաղրուքին Վախրանգայ ընդդէմ Օսաց և Խաղրաց և միաբանել ընդ Պարսից. — Այդուանք Վախրանգայ 'ի կողմանս Պոնտոսի, աւանդութիւնք նորին գլխորդայ և զյիւսիսնէ աշտարակին. — Վախրանգայ գիշորքին տաւ ընդ քրիստոնէից՝ տեսանէ տեսիլ և դասնայ յետս. — Յաղրուքին Յունաց 'ի վերայ Պարսից, և ապրելոցն 'ի մարտէն հաստալ 'ի քրիստոս. — Վախրանգայ արտաքինք ընդդէմ ուխտադրոճ Յունաց, և հաշտութիւն ընդ կայսեր:

Յայնմ ժամանակի ելին Օսքն ընդ դրունս Դարբանդայ, և գերեցին զամենայն քարթլ, 'ի գետոյն կուրայ 'ի գլխոցն մինչև ցիւրնան. և մօրին 'ի Մովկան և 'ի յԱւան, և գերեցին. և տարան զքոյրն Վախթանգայ զՄիհրանդուխտ: Ելին և Յոյնք ¹, և առին 'ի ներքոյ չրոյն եգրայ՝ մինչև ցերերդն Քուլայ. և ամենայն տունն վրաց մային 'ի սուգ անհնարին, և ասին. Վասն մեզաց մերոց յաճախեցին մեզ չարիք. զի ոչ պահեցաք զաւանդն քրիստոնէութեան, որպէս և հարքն մեր ²:

Եւ մանուկն Վախթանգ էր ջերմ 'ի հաւատաւ քրիստոնէութեան, և խոցոտեալ լինէր՝ զի եղաւ տուն կրակի 'ի քարթլ, և յիրաւի պաշարեալ ունին զմեզ վիշտքս այս. և էր ամայն ³ հնգեւ տասանից: Եւ հաւաքեալ աւ ինքն զա-

¹ Զարչաւանս զայս Յունաց՝ կարգէ Վախուշտ առ Մարկիանոսի կայսեր, յառաջին ամս երկրորդի կիսոյ հինգերորդի դարուն:

² Օրինակն՝ զօր, յեզու Պրոսէ 'ի Բաւանի լեզու, յաւելու աստանօր. Եւ եկին հասին այս ամենայն վերջ 'ի վերայ մեր և կրիպատունք դասին հաստատեալ յախարհիս քարթլաց. վասն որոյ և պաշարեցին զմեզ չարիքս այսոքիկ: — Փոխանակ այսոք բանից՝ պահասն 'ի

մենայն մեծամեծսն, մխիթարէր զնոսս և ասէր, եթէ Հայրենի կամօք խաւ տեսց զմեզ Աստուած 'ի փրկութիւն և 'ի զգաստութիւն. և արդ յայսմհետէ դարձիք յիւրաքանչիւր չարեաց, և դառնայ առ մեզ Տէր զթութեամբ: Եւ թէպէտ ոչ տեսէք յիս բարի ինչ, զի մանուկ եմ ես, այլ զհարցն իմ զերախտիս յիշեցէք, և մի յուսահատիք 'ի Տեառնէ վասն տղայութեան իմոյ, զի օգնէ մեզ Տէր Աստուած մեր՝ վասն աւուրան իւրոյ և աղօթից հարցն մերոց: — Եւ առաքեաց առ եղբայր մօր իւրոյ Վարդաբակ՝ ⁴ խնդրիլ օգնութիւն 'ի վերայ Օսաց. և առաքեաց նմա երկու տասան հազար վառեալս: Եւ ինքն Վախթանգ ձայն տուեալ յամենայն վիրա, ժողովեաց ընդ հեծեալ և ընդ հետեակ՝ հարիւր և վաթսուն հազար. և աղօթեաց զեօթն օր պահօք և հրակմամբ գիշերաց, և տուրս տալով կարօտելոց: Եւ յանձն արար զթագաւորութիւնն մօրն, և թէ մեռանիմ, ասէ, 'ի պատերազմիս, առցէ զթագաւորութիւնս Միհրան՝ թոռն Տրդատայ, առեալ զքոյր իմ Խորանձէ 'ի կնութիւն: Եւ զնաց ինքն 'ի թիւանէթ. և եկին առ նա բնակիչքն կովկասու յիսուն հազար. և չողաւ և հանց ընդ դուռն Դարխալայ ⁵, և մօտս 'ի դաշան Օսէթայ, և նստաւ յայնկոյս գետոյն Արա-

Թարգմանութեան նորին աղբ ինչ 'ի յաջորդ բանիցն, զորս աւելի ունի օրինակն մեր:

³ Յօր. Պակասի առջ:

⁴ Որ էր իշխան Աղուանից աշխարհին. որ և ըստ Վախթանգայ պատմի՝ սիրով ընկալաւ ըզհեղեղական թիւան Արաց, զի և գերիկի նորին աւերեալ էր Օսաց:

⁵ Յօր. Գաւալայ:

զու: Եւ Օսքն ժողովեալ զազդն խա-
զրաց, և եկեալ բանակեցան յայնկոյս
գետոյն՝ զաւուրս եօթն: Եւ մենամար-
տիկքն աստի և անտի փորձէին զմի-
մեանս. և յեւթնեորդում՝ աւուրն այր
մի՝ ի խազրանց՝ թարխանն անուն՝ Եւանէր
և կոչէր զոք որ կարողն իցէ ի զօրացն
վախթանգայ: Եւ ընտրեցին պարսիկ
մի, որ բազում քաջութիւնս ցուցեալ էր
նորա. և ի հանդիպելն միմեանց՝ եհար
զնա թարխանն՝ ի վերայ գագաթանն և
ճեղքեաց յերկուս. և էր անուն նորա
Փարսման-Փարսուր: Եւ տրամեցաւ
յոյժ թագաւորն վախթանգ, և մտեալ
ի վրանն՝ կարգաց արտասուզ զԱս-
տուած զգիշերն: Եւ ի լուսանալ առա-
ւօտու՝ ելանէր թարխանն դարձեալ
նախատեւ, և վատմարեւով զվախ-
թանգ. և ոչ գտաւ որ յօժարել ի
սիրտ՝ կռուել ընդ նմա: Իսկ ապա
վախթանգ անկաւ ի վերայ երեսաց
իւրոյ, և ելաց առաջի Տեառն. և յա-
րուցեալ կազմեցաւ. և կնքեաց զինքն
խաչիւն ֆրիստոսի, և ոչ լուաւ՝ որք աւ-
գելուին զնա՝ որպէս զմանուկ և զան-
փորձ, այլ ասաց. Օգնեցէք ինձ աղօ-
թիւք, զի Տեառն է պատերազմ, և նա
է յոյսն իմ և վստահութիւն և արուեստ
ձեռաց: Եւ յարձակեալ ի վերայ
թարխանին՝ եհար նիզական ի վերայ
միլիոն, և շեշտակի հանէր ընդ թան-
ձրութիւն զրահիցն և մարմնոյն՝ ի միւս
կողմն. և անկեալ յերկվարէն՝ ստառ-
կէր: Եւ վախթանգ ի տեղուոյն անկա-
նէր յերեսս, և ասէր. Որհնեալ ես Տէր
իմ, ֆրիստոս Աստուած, որ առաքեցեր
զհրեշտակս քո, և սատակեցեր զհայ-
հայիշան քո: Եւ կտրեալ զգլուխ նորա՝
տարաւ առ զօրս իւր, ի վշտասան ա-

մի տիոյ իւրոյ, Եւ ի միւս այլ օրն՝ այր
մի հակադաշն էանց յայսկոյս գետոյն,
և խնդրէր զվախթանգ. և զօրու-
թեամբն ֆրիստոսի՝ զնա ևս դիմաթա-
ւալ յերկիր ընկենոյր: Եւ ապա յար.
ձակեցան զօրքն, և հարին զՕսք և ըզ-
թագրիկքն, և մաշեցին զնոսա ի սուր
սուսերի իւրեանց. և մտին յաշխարհ
նոցա ի գիւղս և ի քաղաքս, և յաւա-
րի հարին և գերեցին զնոսա. և մտին
ի Բաշանէթ և ի Ջիբէթ, որ է ներքոյ
Ափխաղեթոյ, առին և գերեցին զնոսա:
Իսկ թագաւորն Օսեթոյ փախուցեալք
յամուրս՝ առաքեցին դեսպանս առ
վախթանգ՝ առնել հաշտութիւն և տալ
զգերեալսն Օսաց, և առնուլ զՔար-
թլայն. և լուաւ նոցա, և ետ զՕսան ե-
րեսուն հազար, և էառ զիւրն երեքհա-
րիւր յիսուն հազար, և զեղյոյն իւր
Միհրանդուխտ¹. և առաքեաց զնոսա
ընդ ճանապարհն Դարիալայ. և զզօրսն
Պարսից և կովկասոյ դարձոյց ի յաշ-
խարհն իւրեանց բազում աւարաւ: Եւ
ինքն զօրօք իւրովք զամս երիս արար
պատերազմ՝ ընդ Ափխաղեթոյ գա-
ւառսն, և էառ զամբոցսն ամենայն².
զի թագաւորն Լեւոն անպարապ էր ի
Պարսից կողմանէն: Եւ ապա դարձաւ
ի Մշխիթա խնդութեամբ և ուրախու-
թեամբ. և արար տօն ցնծութեան ի
փառս Աստուծոյ մեղոյ ֆրիստոսի, տա-
լով տուրս աղքատաց: Եւ արձակեաց
ընծայս թագաւորին Պարսից՝ քսան
հազար երկվարս, և ծառայս տասն հա-
զար՝ ի ձեռն քրմապետին, և խնդրեաց
զզուսար նորա իւր ի կնութիւն: Եւ եղ-
բօր մօր իւրոյ երկու հազար երկվար, և
հազար ծառայս³: Եւ թագաւորն Պար-
սից տեսեալ զաջողութիւն նորա, ետ

¹ Վախթանգայ՝ յեա աւերելոյ զհաջանէթ և
զՋիբէթ՝ մտեալ յայխարհն Օսաց, ընկալաւ
զաշխոս խաղաղութեան յարքայէ նոցուն, որ
ապրեալ էր յամուրս լեւանց կովկասուն: Ի փոքր
կանաւորութեան գերեաց՝ վասն Միհրանդուխտի
քեռ վախթանգայ՝ պահանջեցին Սօք տալ ի
գուրս 30000 ի նշանաւոր արանց իւրեանց՝ գե-
րեւոյ ի վրայ՝ յականէ յանուանէ զոր յանձն
տեւեալ վախթանգայ՝ փոքեաց զբոյր իւր ի գե-
րութենէ. իսկ վասն մնացելոյ գերութեանն՝

սահմանեաց Վախթանգ փոխանակել զայր ընդ
առն. որով զերծան ամենայն վիրք գերեալք յՕ-
սաց՝ արք 350000. այլ զկնի այր փոխանակու-
թեանն մնացին դարձեալ ի ձեռս Վրաց գերեալք
Օսաց անտի՝ արք 650000, թով զհաշանիկն և
զՋիկն: — ՎԱԽԹԱՆԳ:

² Փոխանակ և էառ զարդան ամենայն՝ օրինակն
Պրոսէի ունի և էառ զարձա՛ս պնէնտեան. (Tous
étaient dans l'estonnement).

³ Պրոսէ. Հազար երկվար և նոյնքան ծառայս:

Նմա գրուստր իւր Բաշենդուխտ, և ըզ-
լեառն կովկասու 'ի հրամանն նորա¹,
և գրեաց զնախերգանս թղթոյն այս.
պէս. ՅՈՐՈՒՄԷ Շահիլմանայ² առ վախ-
թանգ վարնխորովթանգ, ասլուխն
տաան թագաւորաց՝ խնդալ, Արարի
զոր խնդիւնցերն. այլ զօրացիր և քաջ
լեր՝ կալով ընդդէմ՝ Յունաց, առեալ
զքեռին քո ընդ քեզ:

Եւ արար վախթանգ հանդէս զօրաց
երկուհարիւր հազարաց, և ել ընդ
Հայս, զի և նոքա ևս առեալ էին զնոյն
պատուէր: Եւ ելին նախարարն Հայոց
ընդ նոսա՝ Տրդատ Արշակունի և Արև
Սիւնեաց տէր և Զուանբեր վառպուրա-
կանի և Համազասպ Տարօնոյ, Գրիգոր
և այլք ընդ նոսա³. և չոգան 'ի կա-
րախպուլա, և թողին 'ի վերայ նորա
իշխանս երկուս՝ երկուտասան հազար
հեծելօք՝⁴ պատերազմել ընդ նմա,
որ է կարնոյ քաղաք. և չոգան ընդ միջ-
երկրայս մինչ 'ի Պոնդոս, և առին ե-
րիս քաղաքս: Եւ պատուէր ետ վախ-
թանգ զօրացն մի զոք սպանանել զա-
նորինացն պարտն⁵, որք Գրիստոսի
երկրպագուքս են իբրև զմեզ: Քանզի
հաւն իմ՝ յորժամ ել ընդ Պարսից թա-
գաւորին 'ի Յոյնս, և հասին մինչև
յՈՒՆՃԻԱՆՃԱՆ, ուր գերեզման սրբոյն
Գրիգորի է, և ձեռնարկեցին յեկեղե-
ցւոյ մանկունսն՝ յաղթահարեալք եղեն,
և դարձան ամօթով սակաւք՝ 'ի բաղ-
մաց⁶. Եւ տասնօրեայ ճանապարհաւ
անցեալ ընդ այն՝ եկաք մեք այսօր մինչ
'ի կոստանդնուպոլիս, ուր հաւատա-
ցեալ 'ի Գրիստոս թագաւորն կոստան-
դիանոս յաղթեաց բիւրուց բազմաց:

¹ Պրոսէ ունի. Եւ զլեառն կովկասու կար-
գեաց նմա յօժիտս:

² Թուի Շահիլման, զի վախթանգ ունի
« ՅՈՐՈՒՄԷ՝ յարցայից արքայէ՝ առ վախթանգ,
և այլն »:

³ Այս ամենայն հայազգի իշխանք գտանէին
'ի քաժէին արեւելեան Հայաստանի, որ էր ընդ
ԸՄՈՎ Շապուհ Սրկորդի, արքային Պարսից, լուս
գաղանց՝ զորս էդ. սա ընդ Արկադեայ կայսեր,
որդոյ Մեծին Թէոդոսի:

⁴ Վախթանգ ասէ. « Սրկուս իշխանս, տա-
լով առ իւրաքանչիւր 'ի նոցանէ երկուտասան
հազար հեծելոց »:

խաչին նշանաւ: Եւ մեծն Տրդատ թա-
գաւորն Հայոց պատուհասեալ 'ի Տեառ-
նէ, վասն տանջելոյն զուրբ Լուսաւո-
րիչն և զսուրբ տրիկնայն, և ծանու-
ցեալ զԳրիստոս՝ ոչ յաղթահարեցաւ
յուսմեք մարդոյ, զոր գիտէք դուք իսկ,
քաջք Հայոց, թէ որպէս հսկայն և
նշանաւորն յամենայն ազգս Տրդատ՝
թիկամբք բռնարկեալ՝ շինէր տուն
Աստուծոյ, Գիտէք և զպիլծն Յուլիա.
նոս սատակեալ 'ի Պարսս. և Յուբիա.
նոս էառ զթագաւորութիւնն. և ասաց
Տէր ցՊարսից թագաւորն. Մի կուիր
ընդ Յուբիանոս, զի չտամ զնա՝ 'ի ձեռն
քո: Եւ դուք, բնիկքդ Վրաց և Պարսից,
գիտէք զնախնին ամենայն թագաւո-
րաց զնեքորովթ, որպէս գրեալ է ըզ-
նմանէ⁷, եթէ զառիւծ և զայծեանմի
'ի հետեակուց ըմբռնէր նա, և զամե-
նայն երէ և զգազան. և վասն այսորիկ
ամենայն ազգ հնազանդեցան նմա. և
չինեաց գաշտարակն 'ի սեանց ոսկւոյ,
և յարժաթի սարսից եղեալ զհիմունս
սըն, կպերբ և աղիւսով պատելով զայն.
և 'ի պատուհանս դնելով ակունս լու-
սատու՝ յակինթս և զմրուխտս, զի գի-
չեր մի լիցի 'ի փորափոխոցս նորա, և
'ի տաճարս և 'ի սենեակն՝ զոր շինէին
'ի մէջ նորա. և զբարձրութենէն ա-
սեն թէ երեքօրեայ ճանապարհ էր ընդ
եւս աստիճանացն՝ մինչև ցմուռ դրանն.
և անչպիսի տարան վերացուցին զկա-
տարն՝ անցուցանելով ընդ կենսաբեր
օդն, և մտանել ելանել 'ի միջկուտ և
'ի փնասաւրբ կայանս աստեղաց, ուր
չրթագայութեամբ եթերոյն բորբոքէր
տեղին. և ոսկին և արծաթն՝ զոր ընդ

⁵ Այսպէս յօրինակին. Թերևս ուղղելի. Մի
զո պատմելի անօրինաց դեպքորս:

⁶ Անհարկէ 'ի մարտն Միհրանայ ընդ կոս-
տանդիանու, զորմէ ճառեցաւ 'ի վեր անդր:

⁷ Այս ամենայն զնեքորովթայ և զաշարա-
կէն՝ առեալ իշէ (Թերևս յառասպելաւանդ զը-
րոց անտի՝ զոր 'ի վեր անդր յիշեաց՝ գտեալ Մի-
հրանայ, որ պատմէր յաղապս ազգին Նեքորով-
թայ և շինութեան Գաղիլեայ. Գլ. Ժ. — Այս-
սորիկ է տեսնել և առ վարդապետ պատմի
(Գլ. Ե. էջ 11), որ և զշինութիւն աշտարակին
կարգէ՝ սկսեալ յառաջին ամի Ռաբաւուս մինչև
ջբառասներորդ ամի նորին:

մէջն տանէին՝ հալել սկսաւ, և խար-
չատէին շինողքն: Եւ անդ իմացան
գիմաստս և զխորհուրդ եւթն կամարաց
աստեղացն, և շատ ինչ հանճարս, զի
մի ընդ՝ վայր լիցի՝ առ Աստուած դի-
մելն նոցա: Եւ 'ի պարտիկ լեզու գայր
ապա ձայն առ Ներբովթ, որ ասէր
ցնա. Ես եմ Միքայէլ՝ որ ասեմ քեզ
բանիւ Տեառն. եւ և գնա այտի, զի ա-
հա ձեռադործք այդ հասաւ հանդէպ
զբախտին. բայց լեռանս այս՝ ուրկամ
եմ՝ միայն անձրպետէ պրախտն, ընդ
որոյ ստորոտն ելանէ արեգակն: Եւ ընդ
այս ելանեն գետն Նեղոս և փստն.
Գեհնո բերէ անուշահոտ ծխանելիս, և
բանջարս խոտոյ, որ խառնի ընդ մուշկս,
զոր կազմեն մարդիկ 'ի պատրանս ուրն
գաց 'ի հոտ անոյ: Արդ դու թէ յի-
րաւիցանկատ երթալ 'ի բարձրութիւնս
երկնից՝ տեսանել զԱստուած, դնա
կաց 'ի սահմանի բնութեան քո 'ի խո-
նարհութեան մոտոց, և 'ի վերայ՝ ուստի
ստեղծար, և բնականց 'ի մէջ գետոյդ
Եփրատայ և Ջիլատայ ¹, և թող զմար-
դիկդ գնալ յո՞ և կամօյն. բայց յԱս-
տուծոյն մի գնացեն. և 'ի պատշաճ
ժամու գայ առ ձեզ Տէրն ձեր 'ի խո-
նարհ, և գտանի 'ի մէջ այգանդաց և
կատաղի Ժողովորդոց, և 'ի նոցանէ ա-
տեցեալ մեռանի. և գայ գտանէ զձեզ
'ի մէջ գոթոյց 'ի Տարտարոսն, և հանէ
զձեզ անտի, և յարուցեալ 'ի մահուա-
նէ՝ շինէ ձեզ աշտարակ և սանդուխս
եւանելոյ առ Աստուած: — Եւ զայս ա-
սացեալ էարկ գնորդք 'ի հոտոյ դրախ-
տին, և արքեցան զմայլեցան և միսի-
թարեցան. և մոռացան զխորհուրդս
և զլեզուս՝ զոր գիտէին յառաջն՝ եւթն
լեզուս. և առին օտար լեզուս՝ ըստ
թուոյ իւրեանց: Եւ թողեալ զքաղաքն
և զաշտարակն՝ զոր շինէին, գնացին
յաշխարհն իւրեանց. Թորգոմ ² 'ի
Թորգոմեանսն, Սիլոն 'ի Սիլեթ, Բեր-

ձեանք 'ի Բերձանս, Բոյնք 'ի Յունէթ,
Ագ և Մագ՝ յԱգմագուգէթ, Պարս
'ի Պարսս, և այլք յայլս ³. Եւ այս
բանք չեղև յայտնապէս ասացեալ, այլ
գրեցաւ և պահեցաւ 'ի ծածուկ՝ որպէս
խորհուրդ. և ես պատմեցի ձեզ 'ի յօ-
գուտ, զի գիտասյիջ և դուք Պարոքդ,
եթէ չէք օտարք 'ի Քրիստոսէն մերոյ.
և նախնին ձեր Բէլ, որ նա ինքն է Նե-
բովթ, որ Կոստան կոչի, ազատեալ է
'ի գոթոյց յԱստուծոյ մերոյ Քրիստոսէ.
և դուք խնայեցէք յամենեանն՝ որք
բարձեալ բերիցեն զանուն նորա սուրբ,
և մի աւերէք զօուրբ տաճար նորա, զի
մի բարկութիւն նորա բորբոքեսցի 'ի
մեզ:

Եւ զայս ասացեալ՝ հրաման եհան
յամենայն տեղիս՝ զի յայտ եկեացեն
թագուցեալքն, և մի երկիցեն քրիս-
տոնեայք 'ի սրոյ. բայց զի զինչսն տայ-
ցեն 'ի դուրս և առցեն զգերիսն: Եւ
ինքն զբազումս 'ի գերեացն զգեառաւո-
րեալ՝ ազատեաց, և առաւել ևս զեկե-
ղեցականսն, և տալով նոցա ըստ ան-
ձին երիս դահեկանս: Եւ զՊետրոս քա-
հանոյ և զՍամուէլ մոնոզոն, որք լեալ
էին աշակերտք Գրիգորի Աստուածա-
բանի՝ առ իւր պահեաց. և ասէ ցՊե-
տրոս. Յիսկզբան մտից իմոյ 'ի Յոյս՝ չե-
տու բնաւ ձեռնարկել 'ի շինուածս տա-
ճարաց Աստուծոյ: Եւ ասէ Պետրոս.
Աստուծոյ եկեղեցի՝ բանաւոր հօտ նո-
րա է, զորս յետ սպանանելոյն՝ ոչ դու
և ոչ այլ ոք կարէ կանգնել իսկ զշի-
նուածս դիւրին է ում և կամ իցէ: Ոչ
դիտես եթէ ամենայն մեղք սրբեցան
լըհեղեղաւն, և արիւնն Հարելի տակա-
ւին գոչէ առաջի Տեառն. և զամենայն
վատթարութիւնս Հրէիցն անտես արա-
րեալ, զարիւնն Չաքարիայ՝ որդւոյ Բա-
րեբայ խնդրել ասաց 'ի նոցանէ. և
այսպիսի քանի արիւն անպարտ հեղաւ
'ի ձեռաց քոց: Եւ ասէ վախճանիչ.

1 Զիս և արաբական կողումն Տիգրիսի:

2 Եփրատիկն պակասի թիւգամ:

3 Վախճանից օռնի պատգամ խառնով զՆե-
բովթայ, և Եթող չուեալ 'ի Հնդկիս՝ զորս զՀնդգ.
կացն խառնէն բարբառ, և զՍինգացիս 'ի Սինգ.

զՀռովմայեցիս 'ի Հռովմ, զՅոյնս 'ի Յունա-
ստան, զԴոք և զՄագդոք 'ի Մագուգէթ, զՊար-
սիկս 'ի Պարսաստան: Եւ էր նախկին բարբառ՝
Ասորեստանեայցն. և այսորիկ են ահա եօթա-
նէքն լեզուք յառուրս Ներբովթայ »:

Պարտաւոր ցուցեր զիս դու, և ես մե-
ղայ Տեառն: Եւ ասէ քահանայն. Եթէ
ճանապարհ բացեր բանիցս, մեղք քո
եթող չըքեզ. և այլ մի ես պատենազ-
միր ընդ որդիսն Աստուծոյ, և զհուրդ-
վառեալ 'ի քէն՝ դու չիջուցես: Եւ ա-
սէ վախժանգ. Խնդրեա յԱստուծոյ,
զի յայսմ գիշերի տեսից զհաճոյսն Աս-
տուծոյ: Եւ Պետրոս ասէ. Այդ առաւել
է քան զիս, բայց սրբոց յանձն արա-
ցուք: Եւ բարկացաւ Սամուէլ, և ասէ.
Ո՛չ դիտես զսէրն ֆրիստոսի, որ ասաց
ցՊողիկարպոս. Եթէ ոչ երկմտէին և
ժառերանային հրեշտակք, յամենայն
քաղաքս և 'ի դիւղս խաչէի ես՝ 'ի կե-
ցուցանել զամենեանս: Եւ զի՛նչ ասէր
Աստուած ցանօրէնն Աքաղ՝¹ Խոն-
դրեա դու քեզ նշան յԱստուծոյ քում-
մէ 'ի խորութեան կամ 'ի բարձրու-
թեան: Եւ ֆրիստոս ասաց. Ջոր ինչ
խնդրէք յանուն իմ՝ արարից ձեզ, Եւ
արդ դու թագաւոր՝ կցորդեա մեզ ա-
ղօթիւք, և ինի որպէս և կամիս: Եւ 'ի
ժամ երեկոյին ննջեաց թագաւորն ա-
ղօթիւք, և Պետրոս և Սամուէլ հակեցին
զգիշերն ամենայն: Եւ տեսներ թա-
գաւորն զսուրբն Նունի 'ի տեսլան,
զի ասէր ցնա. Արի և ել ընդ առաջ, զի
ահա գան առ քեզ թագաւորք երկնի և
երկրի: Եւ բացեալ զաշտ 'ի վեր վախ-
թանգ՝ տեսներ զքաղաքն Բիւզան-
դիոն, 'ի նմա աթոռք երկու, և մանուկ
մի և այր մի կատարեալ՝ նստէին 'ի վե-
րայ նոցա, և այրն էր ֆրիգոր Աստուա-
ժարան. և ասէր ցնա. Մարդ չար, ըն-
դէր հարեր զբանակս Տեառն, և կոտո-
րեցեր զխաչինս նորա. և արգ, եթէ ոչ
տկն առեալ էր իմ՝ սրբուհւոյդ Նունեայ,
կրէիր դու զպատուհասն հարց քոց
հրապաշտից: Եւ ասէ Նինաւ ցվախ-
թանգ. Վնա, անկիր յոտս թագաւո-
րին՝² Եւ արար այնպէս. և նստոյց զնա
առ իւր, և ետ 'ի ձեռս նորա մատանի՝
լուսատու ակամբ կազմեալ: Եւ Պետրոս
և Սամուէլ կային երաշխաւոր վախ-

թանգայ, եթէ այլ ոչ մեղանչէ նա,
Եւ կայր անդ խաչ փառապարգ, և թագ
'ի վերայ նորա. և տեսանէր վախժանգ
զկայսրն՝ զի առնոյր զթագն 'ի խաչէն,
և գնէր 'ի դուռն նորա ասելով. Ահա
քեզ երրորդ պսակ, Եւ զայս ամենայն
տեսեալ յերազի՝ որպէս և հայցեացն.
և ապա զարթուցեալ փառք ետ Աս-
տուծոյ: Եւ 'ի վաղիւն դառնայր առ
Հայրք, և պատուիրէր մի ումեք մեղան-
չել:

Բայց կայսրն Յունաց ել զհետ նորա
ինն հաղարաւ, և փախոյց 'ի զօրացն
վրաց: Եւ զայն տեսեալ քեռորդւոյ նո-
րա Պարսկին, ասէ ցվախժանգ. Օձ,
ծնունդ իժի, զինչ է այս զոր արարեր.
որպէս լուայ՝ մայր հօրն քո՝ 'ի Յունաց
աստի էր, և քարշեաց ժանտ սերմն
զքեզ 'ի նոյն, և 'ի սէր մեռելոյն Յի-
սուսի՝ ահա կորուսեր զՊարսս. և չմնայ
քեզ այդ: Եւ ասէ վախժանգ. Խա-
չեան՝ Աստուած իմ է, և նա փրկէ
զիս. և դու կարգաւ զհուրն, և մարտիր
ընդ Յոյնսդ: Եւ ինքն Հայրք և վրօք առ-
անձնացաւ: Եւ մարտեան Պարսք և
կովկասեանք ընդդէմ կայսեր, և յաղ-
թեցան 'ի նոցանէ. և մեռաւ քեռին
վախժանգայ, և քսան և հինգ հազար
Պարսիկ, և Ալալ թագաւորն Լեկաց,
և յորով նախամարտիկք ընդ նմա յիւ-
րոյն. սպանաւ և զլիաւորն Բանայ. և
այն եղև բեկումն անհնարին 'ի կող-
մանն Պարսից: Յայնժամ ապա իջեալ
'ի կառայն՝ երկրպագեաց ֆրիստոսի,
ասելով. Քո է, Տէր, յաղթութիւն, և
ոչ հրապաշտից և ամբարտաւանից: Եւ
ասէ ցՊետրոս. Բեր զխաչն և դիր այդր,
և երկիր պագցեն ամենեքին սր ընդ իս
են, և որ ոք ոչ հնազանդեսցի՝ մեռցի:
Եւ Բարդաւ թագաւորն Մովկանայ ար-
համարհեաց զխաչն և զբանն վախժան-
գայ. և սպան զնա սպարապետն վրաց
Ջուանքեր. և ասէ ցամենայն զօրսն.
Այս է մեր զօրութիւն և յաղթութիւն:
Եւ զարհուրեցան ամենեքեան, և ասեն.

¹ Բօք. Ասայք: — Իսկ զաւ 'ի ֆրիստոսէ ա-
սացեալսն առ Պօղիկարպոս՝ չգտանեմ ուրեք
յիշատակեալ առ կենսագիրս Աբբայն:

² Թագաւորն առ վախժանգայ պտտի գնի
նոյն ինքն Մեծն Կոստանդինոս:

ելթէ տացէ մեզ յաղթութիւն խաչդայդ, արհամարհեմք զամենայն պաշտաւ մունս մեր, և զՔրիստոս պաշտեմք՝ որ կայ 'ի դմս:

Եւ 'ի նմին ժամու ելանէր Յոյն մի, Պողիկարպոս անուն, քուերորդի կայսեր, և խնդրէր մենամարտիկ 'ի զօրացն վախթանգայ: Եւ ոչ զք վատհացաւ ելանել, քանզինա էր սպանող զօրագրւխին Պարսից: Ապա ասէ վախթանգ. Առիւծ ընդ աղուեսու: Ի ոչ ելանէ, բայց զի ցուցցի զօրութիւն խաչիս Քրիստոսի՝ ելից ընդ քեզ: Եւ կնքեալ զանձն նշանաւ խաչին, երկրպագեալ և համբուրեալ զնա, չորսաւ ընդդէմ Պողիկարպոսի, և ասէ. Որովհետեւ գիտացեր եթէ երկրպագեաց զօրքս խաչին Քրիստոսի, և խնդրես տակաւին մարտնել ընդ մեզ, ահա արիւն քո 'ի գլուխ քո: Եւ մերձ երթեալ՝ հհար զնա,

1 Այսինքն, ես որ Թագաւորս եմ՝ առիւծ, ընդ ծառայիդ՝ աղուեսու:՝ որպէս յաւելու վախթանգ պատմի:

2 Յաւելու օրինակն Պրոսէի ընդ վախթանգայ. Եւ քառասուն և երեսն հազար՝ ի զքան վախթանգ:

և ճեղքեաց յերկուս, և զարձաւ առ իւրսն՝ փառաւորելով զՔրիստոս: Դարձեալ ճակատել սկսան Յոյնք, և փախոյց զնոս վախթանգ մինչև ցծոյն: Եւ յետ այսորիկ հանդէս արարին երկոցունց կողմանցն. և էին անկեալքն 'ի Յունաց եթանասուն և երկու հազար 2. և ժողովեալ զչեբերայսն Յունաց, և արկեալ ընդ թուով՝ եթմնհարիւր ութսուն հազար 3, և առաքեցին զամենեսին առ կայսրն 'ի ձեռն ներսեսի և Ստրեբրսեհի իշխանացն: Զոր տեսեալ կայսր՝ խնդաց. և եկն առ վախթանգ, և երգուան միմեանց. և ետ կայսրն զթուղարս և զլլարճէթ, զոր առեալ էր 'ի վրաց, և խոստացաւ տալ զգուստոր իւր վախթանգայ: Եւ զարձաւ վախթանգ 'ի սուն իւր մեծաւ ինդուլթեամբ:

Գայ. որ չիք յօրինակի մերում:
3 ԶԹուանշանն լիւ (780000) Պրոսէի վերպաւաւ լիւ (չիւ, 680000 ?) ընթերցեալ, և զգուստոր լինի չայ քնադրին:

Շարունակելի:

ՍԶԳԱՅԻՆ ՅԻՇՍԱԿԳ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿԱՅ

(Տես Հատոր խԱ. էջ 341):

ՍԶԳ. — Մինչդեռ անցեալ տարւոյն Բագմավիպի մէջ էլմիածնի ամսոյն Նոբրտի Տրապի-զոնեցի Տէրմանուկեան Յովհաննէս վարդապետի, 1763 ամին առ Գահոց Ե կաթողիկոս քրած թուղթը կը հրատարակէինք, ազգասէր և ուսումնասէն անձն մի, Պ. Յ. Տ. Կ'աղարկէր առ մեզ նոյն նստիակին հետեալ նամակը, զոր օրինակեր էր Բարիզու Ազգային Դիւանաց մէջ գտնուած իսկազրէն. զոր և 'ի յանձնաթուղթենէ պաշտօնատեարց՝ գտնուած գտեր էր 'ի կարգի տաճկալեզու գրուածոց, իբրև նոյն ազգին վերաբերեալ գրութիւն մի: Նոբրտին քրած է զայս ուժ տարի յետոյ քան զնախընթաց հրատարակածնիս, առ 'Լազար Ամարմին, Եպիսկոպոս Տրապիզոնի, երբեմն նստիակի 'ի Ռուսելիս, որ այն ատեն կը գտնուէր 'ի Միջին Իտալիս. ուստի և թղթոյն հասցէն երկայարար գրուած է այսպէս. « Աստուծով հասցէ գիրս 'ի ձեռն Տեառն 'Լազարու Արհիպապոսում՝ Եպիսկոպոսի և աստուածաբանութեան վարդապետին՝ առ 'ի բարին, 'ի Վէնէ-տիկ և կամ 'Սէքովիս: — Իսկ երկրորդ հատուածն է գրութիւն քերդոյական՝ Կարնեցի Յովհաննէս անուն Տիրացուի մը, որ Սողոմոն վարժապետ մականուամբ կը կոչուէր ժողովրդեան մէջ, և ցայտօր տակաւին կենդանի ծերունիք այսու անուամբ կը յիշեն զնա: Քերդուածին խորագիրն այսպէս ունէր. 1 Յաղագս մեծի սովոյն և սղութեան, որ եղև 'ի քաղաքս Կարին և 'ի չընկայսն նորին, 'ի Թոյլորութենէ ամենաբարի կամացն Աստուծոյ, 'ի խրատ և 'ի զգաստութիւն ներկայ ժամանակս ամբարշտեցեղոցն. շարագրեալ հոմարկան ոտալափութեամբ յամենանուստ մանկավարժ նստարէ Մահտեար Յովհաննիսէ 'ի սոյն քաղաքէ. յամ Տեառն 1813, 'ի մերս թուոյն ՌՄԿԻ Ե: Այս ետքի գրուածոյս օրինակը ուղարկէց մեզ Կարնեցի բանասէրն Աղապաւեան Մկրտէչ: